ԺԲ. 9. 10. «. . . Կատեր իբն Միւէնիէ 25 տարեկան էր և խալիֆներից Բէնի—Աբբազի . . . : Նա 25 տարի խալիֆութիւն արեց . . . նորոգեց քանդուած տեղերը Դարբանդ քաղաքի և բնակիչներին պարգեւատրեց ողորմութեամբ: Քիւֆիական արձանագրութիւնները պատերի վրայ վկայում են նորա արած նորոգութիւնների համար:

ԺԳ. 10. «651 թուին Հէջ. . . . Խէլեակի խանին ժառանգեց նորա որդի Ղազանը, սորա և հօր ժամանակը Դարբանդը և Դագստանը մինչեւ Կուբ և Ազաքս՝ ստորադրւում էին Ղազանի խանին . . . :

«820 թուին Հէջ. Էմիր—Թէյմուր—Խուբ—խան եկաւ զօրքով Խփչաղի կողմից անցնելով Դարբանդից և ձմրուայ չորս ամիսները անցրեց Շիրվան քաղաքում . . . :

«850 թուին Հէջ. Շիրվանի Իբրահիմ Խալիլ շահը մի քանի նորոգութիւններ արեց Դարբանդի պատերի վրայ, որոյ համար վկայում է արձանագրութիւնը Կիրիլօրի դրան վրայ: Նոյն Իբրահիմ Խալիլը շինեց Դարբանդում երեք մեչիդ, որոնք մնում են մինչեւ ցայսօր:

ԺԳ. 11. «915. Շահ Իսմայէլը . . . երկրորդ անգամ գալով Շիրվան՝ տիրեց Բագուի և Դարբանդի բերդերին, և ամեն տարածութեան մինչեւ Խազիրների երկիրը: Մի և նոյն տարին նորա հրամանաւ 500 ընտանիք Ռումիայի սերնդից գաղթեցին Թաւրիզից Դարբանդ քաղաքը, ուր և գտնւում են նրանից մինչեւ 300 ընտանիք: . . . 930 թուին. նորա ժամանակ Իրանի բնակիչները Սուննիդի աղանդները. նոյնպէս և Դարբանդի բնակիչները, որք մի և նոյն ժամանակը սուննի էին, Շաֆիի քարոզութեամբ դարձան շիիտներ:

ԺԵ. 11. «. . . Հրամանաւ Թէհմասնիբ շահի 400 ընտանիք Ռուզիանի ցեղից գաղթեցին Դարբանդ բնակելու համար, նրանցից այժմ գտնւում են Դարբանդում ոչ աւելի քան 200 ընտանիք:

1047 թուին Հէջ. տիրապետողը Իրանի Շահ Աբբասը հրամայեց նորոգել մի քանի տեղերը Դարբանդի որմերի և շինել նոր երկու որմեր քաղաքը պահպանելու համար, մէկը կեդրոնում և